

ՄՇԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՕՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրությունները:
Մեր հասցեն՝ Тифлис, редакция „Мшакъ“
Ваарная ул. д. Тамакшера № 16.
Գամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԵԼԵՓՈՆ № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տոն օրերէն)
Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզով
Ցայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
ՏԵԼԵՓՈՆ № 253.

Հ Ի Մ Ն Ա Ղ Ի Ր Գ Ր Ի Գ ՈՐ Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի



Բեգինի, գուշտապետի և հեռագրական արտադրութիւնների գործարանների Ռուս-ֆրանսիական
Ընկերութիւնը՝ անունով

Պ Ր Օ Վ Օ Դ Ն Ի Կ

Ի Դ Կ Ա Յ ՈՒ Մ



Պատիւ ունի յայտնել ի գիտութիւն յարգելի հասարակութեան, որ նա, Անդրկովկասեան երկրի կարիքներին գործարաններ տալու համար, բանում է ՍՕՏ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՍՕԼՈԼԱԿԱՍԱՅԱ ՓՈԴՈՑԻ ՎՐԱ, ՏՈՒՆ № 4.
(Ամիսագրով նախկին մագաղին)

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՒՈՐ ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՅԱՐԲԻԿԱՅԻՆ ՊԱՆԵՍ ԵՒ ՀԱՏԱՎԱՅՈՒՈՒԹԻՒՆ, ԻՆՉՊԷՄ

Էկիպաժային ընդհին շինքը,

Օգահան շինքը ինքնաշարժների և վիթուպեղների համար,

Խիտ ընդհին շինքը աւտոմոբիլների և օմոնիւրների համար,

Բեգինի տեխնիկական գործուածները,

Բեգինի պենկային և ուրիշ թնտցները,

Էլեկտրոտեխնիկական գործուածները,

Էթերիտային և եղջիրային գործուածները,

Առանձնացնող և կարէլային պատկանելիքները,

Լուսանկարչական պատկանելիքները,

Բեգինացրած կտորեղէն և անթափանցիկ հաղուտա,

Բեգինի խաղալիքներ և գալանտերէյնի գործուածները,

Խրուրդիկական և բժշկական պատկանելիքները,

Բեգինի սպունգները,

Բեգինի սանրերը,

Արքայտային և տալկային գործուածները,

Արտեստական կաշիներ և պրօքլային առանձնացումները,

Լինէլում՝ միագոյն, նախշերով և մէջ ընդ մէջ նախշերով:

Հ ա տ ա վ ա ճ ա ո ռ թ ի լ և ա շ խ ա ր հ ի ա ա մ ե ն ա շ ա լ

Պ Ր Օ Վ Օ Դ Ն Ի Կ

Կ ր կ ն ա կ օ շ ի կ ն ե թ ի

ՊՐՕՎՕԴՆԻԿ՝ ԹԻՖԼԻՍ.
„ПРОВОДНИКЪ“ Тифлисъ.

Почтовый номерч. ящикъ № 110.

Բ Ժ Ի Շ Կ
Ա. Մ ի ի թ ա թ և ա ն ց
Վերագրանալով վերականգն հիւանդների ըն-
դունելութիւնը
Սոլովակ, Բէհրուժեան փողոց № 33.
(ա. օ) առ. 3—2

ՀԱՆՐԱՊԵՏՆԵՐԻ ԳԵՍՏՈՒՆ
ԳԱՇՆԱՄՈՒՐԻ
ազատ գեղարուեստագէտ
ՏԵՐ-ԳԱԹԵԱՆԻ
Елизаветинская, № 40.
Ուսման վճարը՝ տարեկան 60 ռ., ստաց-
վում է կիսամեակներով՝ անպատճերէն և
յուշովաբէն:
(առ.) առ. 10—10

ԱՍՏՄԱՐՈՅԺ
Մ. Գ. Դ ա ն ի լ ի - Բ է կ
Ընդունելով թիւը
Առաւօտեան 10—2 Ժամը
Երեկոտեան 4—6
Հասցէ՝ Ртищевская ул., д. № 7.
(Ե. Կ. Շ.) առ. 50—4

ՀՏԱՊԵՆ ՊԵՏԻ
Վանի առաջնորդ Ջաւէն վարդապե-
տի հեռագիրը, որ տպւում ենք ձՄՀ-
ին՝ այսօրվայ համարում, հաղորդում
է մի կարևոր լուր: Թիւրքաց կառա-
վարութիւնը ձեռնարկել է արդէն վե-
րագործելու հայերին այն կայուած-
ները, որոնք այս վերջին տարիները,
հայկական աղէտալի կոտորածներից
յետոյ, թէ հին ընթիւնի և թէ քիւրդերի
ձեռքով խլվել են հայերից:
Այդպիսի մի կայուած գէպի առաջ
առաջնորդ Ջաւէն վարդապետը ամե-
նայն իրաւամբ պահանջում է փո-
թացելու հայ գաղթականների վերա-
դարձը Թիւրքիա, որպէսզի ամեն մէկը
ինքն տէր կանգնի իր կայուածքին:
Այդպիսի մի կարևոր գէպի առաջ
մեր առաջապետին նայալէս բարոյական

և մարդասիրական պարտականութիւն
է օգնել, աջակցել նիւթապէս մեր այն
գաղթական եղբայրակիցներին, որոնք
ոչ մի հնարաւորութիւն չունեն, մի-
ջոցների պակասութեան պատճառով,
վերագրանալ իրանց հայրենիքը և փո-
րանալ իրանց զբաղւած հողերին, կո-
լուածներին:
Առաջիկայ կարևոր դէպքի առաջ ամեն
գաղթականներն ևս, որոնք հնարաւոր-
ութիւն ունեն վերագրանալ, պէտք է
շտապեն անմիջապէս, առանց ժամա-
նակ կորցնելու, գնալ հայրենիք:
Այժմ գլխաւոր հարցն է կազմակեր-
պել չքաւոր գաղթականներին ուղար-
կելու գործը: Դժբաղդաբար, ինչպէս
հաղորդեցինք երէկ, այն մասնաժո-
ղովը, որ վերջերս ընտրվել է պէտք է
գրազվէր այդ գործի կազմակերպու-
թեամբ, չը հաստատուէր բարձր իշ-
խանութիւնից: Եւ սակայն գաղթա-
կաններին հայրենիք վերագրանելու
գործը այնպիսի մի լուրջ, բազմակեր-
ծիւ և բազմաճողք խնդիր է, որ հար-
կաւոր է ունենալ մի լիակալ, իշխա-
նութիւնից վաւերացված, հեղինա-
կաւոր և վստահելի անձերից բաղկա-
ցած կոմիտէ, որին վստահութեամբ
վերաբերվէր և հայ հասարակութիւնը
և չը խնայէր տալ նրան հարկաւոր
գումարները: Եւ որովհետև նոր կոմի-
տէն կազմելը երկար ժամանակ կը
պահանջէ, ուստի միակ ելքն է, որ
անցեալ տարի Փոխարքայից և մի-
նիստրութիւնից հաստատված Թիւր-
քիայի հայերին օգնող մասնաժողովը
ստանձնէ այդ միտքը:
Եւ մենք կոչ ենք անում այդ մա-
նաժողովին շտապել հարկաւոր ձեա-
կանութիւնները կատարել և իր ձեռքը
առնել այդ մեծ գործը:
Իսկ հայ հասարակութեանը յորդոր-
ներ կարգում չը խնայել իր նուէր-
ները հասցնելու մասնաժողովին:
«Մշակը» ուրախութեամբ յանձն
կառնէ հասցնել նուէրները մասնաժո-
ղովին:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ
Թիֆլիսի առաջնորդ Գաբրիէլ արքեպիս-
կոպոսը ստացել է Վանից հետեւեալ հեռա-
գիրը ամսիս 8 ից.
Թիւրքաց կառավարութիւնը սկսեց
Արճնշի, Նիջավաղի, Աղբակի և այլ
տեղերի հայոց գրաված կայուածնե-
րը վերագրանել: Փութեցքը ձաւրաց
հանել գաղթականներին:
Վանի առաջնորդ Ջաւէն վարդապետ
Բերլին, 9 սեպտ.
Մամուլի կոնդէրէի բազմաթիւ ներ-
կայ էին գերմանական բոլոր միջիս-
տները, պիտէ ունենալով ստատու-
սեկրետար Փօն-Ջէնին:
Գոնդէսը բազմեց նախագահ Ջին-
գերի ճանով, որը ի միջի այլոց ա-
սաց, որ բոլոր ազգերի մամուլի ներ-
կայացուցիչները նպատակը, ի շարս
արհեստակցական շահերի ուշիւ պահ-
պանութեան, հանդիսանում է ժողո-
րդային իրաւունքի մշակումը, ժողո-
րդային, որոնց իրաւաբանական
գրովութիւնը բաւականաչափ պարզված
է: («Հ. Գ.»)
Բերլին, 9 սեպտեմբեր
Մամուլը առաջնորդող յողուածնե-
րով ողջունում է այսօր բացվող մա-
մուլի միջազգային կոնգրեսը: Ստատու-
սեկրետար Ջէնը կօնդէսը կողմնէ
գերմանական կառավարութեան ա-
նունից: Գոնդէսին մասնակցելու հա-
մար եկել են բոլոր երկրների ներ-
կայացուցիչները, թիւով մօտ 500 հոգի:
Առանձնապէս շատ են հիւլ Փրանսիա-
յից, Ռուսաստանի ներկայացուցիչներն
են՝ Մարկով, Բրաբլե, Գուդէլօս, Վա-
սիլէյսկի (Բուկով) և Տ. Նազարեան
(Թիֆլիսից): Գոնդէսը ընկնում է մա-
մուլի արհեստակցական դատարան
հաստատումը, արհեստակցական գաղա-
ւթիքի, ժողովրդային միջազգային
փոխադարձ ապահովագրութեան և մա-
մուլի համար հեռագրական և պօս-
տային տարիքները իջեցնելու հար-
ցերը, Առաջարկութիւն է մտցված:

վերաբանել գրական սեփականութեան
իրենի կօնդէսին: («Հ. Գ.»)
Բերլին, 9 սեպտ.
Մարտիկեան գործերի վերաբերու-
թեամբ գերմանական պատասխան նօ-
տան Փօն Ջէնը յանձնեց Փրանսիական
գեապան Պամբոնին և պաանիական
հաւատարմատարին: («Հ. Գ.»)
Բուզապեղա, 9 սեպտեմբեր
Պարամիտի այսօրվայ բացման ա-
միթով սօցիալ-դեմոկրատները երե-
կոյեան 25 տեղերում ժողովներ կազ-
մակերպեցին, ուր բանաձեւեր ընդուն-
վեցին յօգուտ ընդհանուր ընտրողա-
կան իրաւունքի: Ժողովներից յետոյ
15,000 մարդ, խմբելի բաժանվելով,
անցան գլխաւոր փողոցներով երգելով
մարտիկէլը և բաներական երգեր:
(«Հ. Գ.»)
Կ. Պօլիս, 9 սեպտ.
Մարտիկի «միութեան և առաջադի-
մութեան կօմիտէ» հրատարակեց,
նկատի առնելով առաջիկայ ընտրու-
թիւնները, իր բաղադրական ծրագիրը:
Նրա գլխաւոր կէտերն են. պատաս-
խանատու միջխորութիւն, ընդհանուր
ընտրողական իրաւունք, սենատի եր-
կու-երրորդ մասն ընտրում է ազգա-
ընկալութիւնը, պալատի օրէնսդրական
նախաձեռնութիւն 10 պատգամաւոր-
ների ստորագրութեամբ օրինագէտ
մտցնելու: պայմանով, գինւորական
ծառայութեան ժամանակամիջոցի կըր-
ճատում: («Հ. Գ.»)
Հէլսինգֆօրս, 9 սեպտեմբեր
Իշխելու իր կայուածքում վախճան-
վեց ֆինլանդիայի նախկին մինիստր,
ստատու-սեկրետար, կայսերական պա-
լատի օրէն-հեղբմէյստէր Լինդբլը:
(«Հ. Գ.»)
Բակլ՝ լրագրին հեռագրում են Պե-
տերբուրգից, որ ժողովրդական լուսա-
ւորութեան միջխոր Վիպըր պիպկ-
է միջխորների խորհրդի առաջ շու-

տափով կերպով բնեւ ազատ ունկն-
դրուցիների ու այլ հարցերը, հաւա-
նական բարդութիւնների պատասխա-
նատուութիւնը իրանից հեռացնելու նը-
պատակով:
Մօսկւա, 9 սեպտեմբեր
Երէկ, Նիկոլայեւրովինսկի վանքում
հանդիսարութեամբ օծվեց նորակա-
ռոյց տաճարը, որ արժէ մօտ մի մի-
լիօն ընդլի: («Հ. Գ.»)
Բիւզա, 9 սեպտ.
Նիխալեւրովինսկի հուսարին՝ դիպի
օֆիցերներից մինը, փողոցում հան-
դիպելով մի նաւաստու, որը նրան
զինուորական պատիւ չը տուց, իսկ
նկատողութեամբ բռնեց օֆիցերի վե-
րաբրկով, ատրանակով սպանեց
նրան: («Հ. Գ.»)
ՊԱՐՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ
Թաւրիզում Սաթթար խանի և կա-
ռավարչական գործերի միջև տեղի ու-
նեցած վերջին ընդհարման մասին
արտասահմանեան մամուլը, «Քէն»
լրագրի ասելով, հետեւեալ տեղեկու-
թիւններն է հաղորդում, որ առաջ
ենք բերում իրեն լրացում հեռագրա-
կան լուրերի:
Էյն-ուլ-Դօվլէն անսպասելի կերպով
ստացաւ օգնական ոյժեր, թիւով 500
քիւրդ ձիաւորներ 4 թիւախօթով: Եւ-
րեկներն անմիջապէս յարձակում գոր-
ծեցին լիզափոխական բանակի հիւ-
սիսային մասի վրա, իսկ միաժա-
մանակ Էյն-ուլ-Դօվլէն ինքն էլ ուժա-
կօծեց մուշտէկների թաղը: Բիւրդե-
րը կուր մէջ էին մտնում մեծ արիւ-
թեամբ: Կարճ ժամանակամիջոցում
նրանց աջողկեց զուրս վանել թողալ-
նականներին զրոյի ամբողջութեանը:
Կառավարութեան գործերը զբաղում
էի պատնէշներ պատնէշների ետեւից,
մինչև որ հասան Սաթթար-խանի գր-
խաւոր ամբողջութեանը: Այդտեղ նը-
րանց դիմաւորեցին հեռասան ֆե-
դայիները ձեռնաձիգ ուժերի տա-

ապարհորդի,
ն լուսաւոյ
դի համալ-

